| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 12 | Փետրվար | 2019 թ. | | Բ | 4614969702 |
| [4] Մատուցման ամսաթիվը | | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| 12 | Փետրվար | 2019 թ. | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 0 | 1 | 4 | 3 | 8 | 4 | 6 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | |

| | | |
|---|---|---|
| [10] Անվանումը | «ՊՈԼԻԳԼՈՏՆԵՐ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [11] Բանկային տվյալները | «Արդշինբանկ» ՓԲԸ | N 2474703016610000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿԻևՅԱՆ Փ. 11 83 ա. | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | Ծառայությունների մատուցման վայրը ( հասցեն ) ՀՀ ք. Երևան, Կիևյան փ. 11 83ա. | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 6 | 3 | 1 | 2 | 6 | 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | |

| | | |
|---|---|---|
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Հ/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Թիվ 41104707 երկրորդ, երրորդ հատորների քրեական գործի թարգմանություն, հայերեն- ռուսերեն | էջ | 581 | 2300 | | 1336300 |
| Ընդամենը | | | | | | 1336300 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ OHANYAN INNA 5401570325

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

12/02/2019 18:18:06

Ո Ր Ո Շ Ու Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

26.12.2018թ. ք.Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Նարինե Հովհաննիսյանս, քննարկելով վարույթիս թիվ 41104707 քրեական գործի նյութերը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, 235 հոդվածի 1-ին մասով, 133 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով,

պ ա ր զ ե ց ի՝

Քաջարան քաղաքի բնակիչ Ժորա Արտավազդի Գասպարյանը 2007թ. հուլիսի 14-ին՝ ժամը 17-ի սահմաններում, զանգահարել է ոստիկանության բաժանմունք և հայտնել, որ Արովյան 10/13 հասցեում գտնվող իրենց բնակարան մուտք են գործել զինված հանցագործներ:

Պարզվել է, որ նշված ժամանակ երկու անծանոթ երիտասարդներ գազասարքավորումները ստուգելու պատրվակով, խաբեությամբ մուտք են գործել վերոհիշյալ բնակարանը և ինքնաձիգ զենքի գործադրմամբ հարձակում գործել բնակարանում գտնվող Գոհար Լեոնիկի Մարտիրոսյանի նկատմամբ, որի ընթացքում Գոհար Մարտիրոսյանին ուժով պառկեցրել են հատակին, նախապես վերցված պարանով կապել նրա ձեռքերն ու ոտքերը, իսկ կպչուն ժապավենով՝ բերանը, ապա հարվածել են նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս, որից հետո հագել են ձեռնոցները, չճանաչվելու համար դիմակավորվել և բնակարանում փնտրել գումար և այլ արժեքներ, իսկ բնակարանատիրոջ գալուց հետո դիմել են փախուստի:

Դեպքի առթիվ 2007թ. հուլիսի 14-ին Սյունիքի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, 235 հոդվածի 1-ին մասով, 133 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 41104707 քրեական գործը: 2007թ. հուլիսի 29-ին Գարուն Գագիկի Գալստյանը ձերբակալվել է, նրան 31.07.2007թ. մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, որում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և տվել խոստովանական ցուցմունքներ վերոգրյալի մասին, նրա նկատմամբ 01.08.2007թ. խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, որի ժամկետը երկարացվել է մինչև 2007թ. նոյեմբերի 29-ը:

2007թ. օգոստոսի 12-ին Մակիչ Վազգենի Ավետիսյանը ձերբակալվել է, նրան 15.08.2007թ. մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175 հոդվածի 3-

րդ մասի 3-րդ կետով: Առաջադրված մեղադրանքում թեև իրեն մեղավոր չի ճանաչել, սակայն ըստ էության ընդունել է կատարած հանցանքը, տվել է խոստովանական ցուցմունքներ և զղջացել կատարածի համար: 15.08.2007թ. խափանման միջոց է ընտրվել կալանավորումը որի ժամկետը երկարացվել է մինչև 2007թ. դեկտեմբերի 12-ը:

2007թ. օգոստոսի 13-ին Արա Վազգենի Ավետիսյանը ձերբակալվել է, նրան 16.08.2007թ. մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, որը նույնպես թեև մեղավոր չի ճանաչել, սակայն ընդունել է կատարած հանցանքը, տվել խոստովանական ցուցմունքներ և զղջացել կատարածի համար: Նրա նկատմամբ 16.08.2007թ. խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, որի ժամկետը երկարացվել է մինչև 2007թ. դեկտեմբերի 13-ը:

01.08.2007թ. որոշում է կայացվել Գարիկ Գագիկի Ստեփանյանին, իսկ 10.08.2007թ.՝ Գարիկ Վաղարշակի Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն մեղադրանքներ չեն առաջադրվել՝ նրանց՝ քննությունից թաքնվելու պատճառով:

Այդ կապակցությամբ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը և հայտարարվել հետախուզում:

2008թ. հունվարի 8-ին որոշում է կայացվել քրեական գործից անջատել մեղադրյալներ Արա Վազգենի Ավետիսյանի, Գարուն Գագիկի Գալստյանի և Մակիչ Վազգենի Ավետիսյանի նկատմամբ գործը, որը 2008թ. հունվարի 12-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2008թ. հունվարի 14-ին անջատված մասով որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կասեցնելու մասին:

2009թ. օգոստոսի 7-ին Գարիկ Գագիկի Ստեփանյանը ներկայացել է ոստիկանության Կապանի բաժին, 2009թ. օգոստոսի 7-ին սույն քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է ինձ և վերջինիս մասով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատախազին:

Քրեական գործով տեղեկություններ են ստացվել, որ Գարիկ Վաղարշակի Մկրտչյանը հանդիսանում է ՌԴ քաղաքացի և պատիժ է կրում Ռուսաստանի դաշնությունում:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել քրեական գործի նյութերը թարգմանել ռուսերեն լեզվով, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով,

ո ր ո շ ե ց ի՝

Թիվ 41104707 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանչուհի Անուշ Սուրենի Խանիկյանին (ծնվ. 04.10.1973թ. Երևան քաղաքում, բնակվում է ք.Երևան, 16-րդ թաղ. շ.14, բն.29 հասցեում), Անի Սերյոժայի Հովհաննիսյանին ծնվ. 30.12.1987թ., բնակվում է ք.Երևան, Սարի թաղ 17-րդ փող., տուն7) և Արմինե Վարուժանի Ալեքսանյանին (ծնվ. 23.03.1987թ., բնակվում է Կոտայքի մարզ,գ.Զովունի, 38-րդ փող.,շ.3,բն.2) ազատորեն տիրապետում են հայերեն ու ռուսերեն լեզուներին, և գործով չշահագրգռված անձինք են:

ՀԿԳ ավագ քննիչ Ն.Ա. Հովհաննիսյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է 10.12.2018թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ

1. Ա.Խանիկյան

2. Ա.Հովհաննիսյան

3. Ա.Ալեքսանյան

ՀԿԳ ավագ քննիչ Ն.Հովհաննիսյան